ռավարուել, ես պիտի երեցփոխ լինեմ. երբ երեցփոխ ընտրուեց՝ մէկ չնչին պատճառով հրաժարուեց իւր անձը ազատ պահելու համար ազգօգուտ գործերից։ Այս տեղ չեմ ուզում խօսել կամ լաւ ես ասել յիշել նորա փոփոխական խօսքերի մասին Եղիշեանցի ազգու խօսքերը։ Գուցէ շատերը հետաքրքիր լինին իմանալ այդ իմ ասաց չնչին պատճառների միտքը, ուստի խօսքս աւելի պարզեմ։

Քաղաքիս մէջ մարդու մէկը իւր ազգասիրութենից շարժուած՝ տղայի պսակելոյ ժամանակ տալիս է տեղւոյս յաջորդին հարիւր րուբլի, կէսը Էջմիածնայ համար, իսկ կէսը տեղւոյս շտեմարանի համար։ Երբ միւս օրը լսում է Պ. . . . . եանց, ժողովում է մի քանի մարդ և գնում է նոյն իսկ ընծայատուի մօտ և ստիպում է իւր նպատակը փոխել. բոլորը շտեմարանին նուիրելով. այս մասին երբ Յաջորդը իւր խօսքը պնդում էր՝ թէ կէսը պիտի Էջմիածին գնայ քո խոստմամբը, Պ . . . . եանց պատճառ բռնելով այդ բանը՝ թողում է երեցփոխանութիւնը։ Ահա ձեզ իսկ և հաստատուն տեղեկութիւն. այս բանիս մէջ մէկ մազի չափ սուտ չկայ, թող իմ ընդդէմ գրեն, և եթէ սուտ եմ՝ այն ժամանակ իմ խօսքս յետ կառնեմ, ինչպէս Մաժակն ես Մշակի 35 համարում գրում է ճշմարտութիւնը թողնելով, որպէս թէ ընծայատուն հէնց իսկապէս այդ դրամը բոլորը շտեմարանին է նուիրած և ոչ կիսով չափ Էջմիածնայ։

Իսկ ինչ որ վերաբերում է 35 համարի նամակին, այսքանս կասեմ որ Ս. Հայրը իւր եկած օրից մինչև ցայսօր ամենին մխիթարուած պահել է և պահում է ես առաւել զանազան ազգու քարոզներով և խօսքերով դէպի ճշմարտութեան ասպարէզը տանելով, խրատում է հեռանալ մոլի ճանապարհներէն և ազգավնաս գործերէն. իսկ այն աւուր քարոզի բնաբանը լինելով «Եւ հրեշտակք նոցա հանապազ տեսանեն զերեսս Հօր իմոյ, որ յերկինս է», չէր կարող այդպիսի քարոզի ընթացք տալ, այլ թէ սուրբ հայրը, ինչպէս որ ես էլ և ինձ նման հազարաւոր մարդիկ կային եկեղեցւոյ մէջ, այն բնաբանը ինչպէս որ հարկաւորն էր բացատրելէն յետոյ՝ մխիթարեց մեզ զգուշացնելով հեռի մնալ վնասակար գործերից. — Ի հարկէ Պ. Մաժակը հասկացել է որ շատ բան իրան է վերաբերում, այդ պատճառով գրել է առակն էլ ասում է «կուժ քեզ ասեմ, կուլայ դու իմացիր». ամեն մարդ իրաւունք ունէր իւր գործքին նայած քարոզի միտքը իրան վերաբերել, ինչպէս Պ. Մաժակը, որ իւրեն անկարգ գործքերից յանդիմանուելով, պատասխանում է ուրիշին՝ կարծելով այլոց վատաբանելով՝ իւրեն արածներն չէ արգելուելու և մեղադրուելու. ամենայն ով եթէ իւրեն ուղղէ՝ կտեսնէ որ ուրիշի իրաւացի յանդիմանութիւններն արդար են եղած իւրեն համար։

ՄԱՐԳԱՐ ՄԱՐԳԱՐԵԱՆՑ.

Ի 24-Ն Դեկտեմ. 1875 ամ.
ի Գանձակ։

---

## ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

### ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ

## ԴՊՐՈՑ

Թոյլտուութեամբ քաղաքական իշխանութեան կսկսի ներկայ 1874 թուականի սկզբից հրատարակուիլ Վաղարշապատում Ս. Գայիանէի վանքից՝ նորին վանահօր Վահան վարդապետ Բաստամեանցի խմբագրութեամբ մանկավարժական ամսագիր Դպրոց վերնագրով։ Դպրոցի նպատակն կլինի ջանալ՝ իւր կարողութեան չափ ձեռնտու լինել ազգային դպրոցների յառաջադիմութեան։ Դպրոցը կբաժանուի երկու բոլորովին զանազան մասներ։

Առաջին մասն — իբրև մանկավարժական առաջնորդ դպրոցների վարժապետների և վարչութիւնների համար-կպարունակէ իւր մէջ՝ 1) մանկավարժական խորհրդածութիւններ, 2) քննութիւն դպրոցական

կանոնադրութիւնների, դասագրքերի և առ հասարակ մանկավարժական շարադրութիւնների, 3) Տէրութեան և ազգային Հոգևոր իշխանութեան կարգադրութիւններ յատկապէս ազգային ուսումնարաններին վերաբերմամբ, 4) Պատմական և վիճակագրական տեղեկութիւններ Հայոց, Ռուսաց և օտարազգի դպրոցների մասին, 5) Դպրոցների վարչութիւնների հաշիւներ, յայտարարութիւններ ևլն։

Երկրորդ մասն — իբրև ընթերցարան աշակերտների համար — կբովանդակէ իւր մէջ, 1) Քաղուածներ ազգային եկեղեցական պատմութիւնից, 2) քաղուածներ Հայոց, Ռուսաց և ընդհանուր պատմութիւնից, 3) Համառօտ տեղեկութիւններ բնական (Ֆիզիքական) և քաղաքական ընդհանուր աշխարհագրութիւնից, 4) մասնաւոր տեղեկութիւններ բնական գիտութեան ամենայն ճիւղերից, 5) Համառօտ քաղուածներ զանազան երկրներում կատարած ճանապարհորդութիւններից, 6) Համառօտ կենսագրութիւններ երևելի մարդոց, 7) Համառօտ հատուածներ ազգային ընտիր շարադրութիւններից հին (գրոց) և նոր (աշխարհիկ) ոճով, 8) Մանկական վէպեր, ոտանաւորներ, առակներ, ևլն։

Դպրոցի երկու մասն միաւորուած կլինին միենոյն տետրակների մէջ, հրատարակուելով իւրաքանչիւր ամիս մի տետրակ հինգ և աւելի տպած թերթից, երբեմն նաև պատկերազարդ՝ եթէ նիւթաւոր միջոցները կներեն։ Դպրոցի տարեկան գինը է ճանապարհածախքով կանխիկ վճարելի՝ Ռուսաստանում վեց րուբլի, Տաճկաստանում և Պարսկաստանում եօթն րուբլի։

Բաժանորդագրութիւնը ընդունվում է միայն Դպրոցի [1]) Խմբագրատանը, որոյ հասցէն է՝ Վաղարշապատ (կամ Էջմիածին) Ս. Գայիանէի վանք, խմբագրութեան Դպրոցի. Ռուսերէն՝ Въ Вагаршапатъ (или Въ Эчміадзинъ) въ редакцію журнала Дпроцъ, въ монас. св. Гаяне [2])։

Խմբագիր — Հրատարակիչ

ՎԱՀԱՆ ՎԱՐԴԱՊԵՏ ԲԱՍՏԱՄԵԱՆՑ,

Վանահայր Ս. Գայիանէի վանքի.

## ՍՈՒՐՀԱՆԴԱԿՔ ԲԻՒԶԱՆԴԵԱՆ.

### ԱՍՈՐԻՔՑ ԽՆԴԻՐ ԵՒ ՉՐԿԱՆՔ.

Մեր ընթերցողաց յայտնի է՝ թէ ինչ է Ասորւոց խնդիրն, որ Բ. Դուռն խոհեմ տնօրէնութեան և հրամանով լուծուելով՝ Ասորւոց կաթուղիկոսն և գործերն դարձեալ մնացին հին դրութեան մէջ՝ այս ինքն Կ. Պօլսոյ Հայոց Պատրիարքարանի իրաւասութեան ներքոյ, ուստի և սկսեցին օրինաւոր և հաշտ յարաբերութիւնքն՝ ինչպէս կերևի փոքրիկ հաղորդած հետևեալ լուրէն։

1) Դպրոցի խմբագրութիւնը խնդրում է չխառնել սորան Արարատ խմբագրութեան հետ բաժանորդագներ և յօդուածներ ուղարկելու կողմից՝ և գործով չպատճառել զանազան դժուարութիւններ երկու խմբագրութեան ևս։

2) Որովհետև ինչ ինչ պատճառներով ուշացաւ այս յայտարարութիւնը, ուստի Դպրոցի առաջին և երկրորդ համարները կհրատարակուին միասին Փետրուարի վերջերում։